Երևան, 28 հուլիսի 2009 թ.

***ՊԳԿ-ն գործի է դնում Հայաստանում Սպանդանոցների Զարգացման Ծրագիրը***

Միավորված Ազգերի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) սկսում է «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը» - GCP/APM/004/GRE ծրագիրը: Այն իրականացվում է Հայաստանի և Հունաստանի կառավարությունների միջև գյուղատնտեսության զարգացմանն առնչվող համագործակցության շրջանակներում: Ծրագիրը մշակվել է 2007 թ. ՊԳԿ-ի Անասնաբուծության և կենդանիների առողջության բաժնի կողմից կատարած մասնագիտական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Ծրագիրը ուղղված է նպաստելու սպանդանոցների զարգացմանը և սպառողներին անվտանգ մսամթերքով ապահովմանը:

Ամուր տեխնիկական հիմքեր հաստատելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ՊԳԿ-ն վերանայել են սպանդանոցների իրավիճակը և կատարել են սպանդանոցների բարելավման վերաբերյալ առաջարկություններ՝ հասարակության առողջության բարելավման և սպառողին անվտանգ ու որակյալ մսով ապահովելու նպատակով: Հատուկ նշանակություն է տրվել սպանդանոցների բարելավմանը և մսի ստուգմանը, որոնք էական դեր ունեն կենդանիների հիվանդությունների ճանաչման և տեղեկացման գործում: Ծրագրի գործողությունները հիմնված են այդ առաքելությունից ստացված տվյալների վրա, որոնք մշակվել և համաձայնեցվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:

Ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Հունաստանի կառավարության կողմից 2009 թ. փետրվարին՝ 1,6 մլն ԱՄՆ դոլար բյուջեով և կիրականացվի գյուղատնտեսության նախարարության և ՊԳԿ-ի կողմից 3 տարվա ընթացքում:

Ծրագրի միջնաժամկետ նպատակն է խթանել անասնաբուծության զարգացումը մասնավոր և պետական համակարգերում, արդյունավետ կերպով բարելավել մսի և մսամթերքի անվտանգությունը և որակը:

Ծրագրի անմիջական նպատակներն են՝ հիմնել մարզային 4 սպանդանոցներ, աջակցել տեղական հաստատություններին և ծառայություն տրամադրողներին զարգացնել իրենց հնարավորությունները, որպեսզի վերջիններս ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ՝ ուղված մսարտադրության կայուն զարգացմանը և համակարգեն այս սեկտորի զարգացման բոլոր ոլորտներում կիրառվող հմտությունները, հնարավորություններն ու ընթացակարգերը:

Ծրագիրը կգործի մասնավոր սեկտորի հետ համագործակցությամբ, քանի որ վերջինիս կողմից առաքելության ձևավորման ընթացքում հաստավել է մասնակցության բարձր պատրաստակամություն՝ ներառյալ սպանդանոցներին անհրաժեշտ սարքավորումների ներդրումները մասնավոր և պետական կողմերի համագործակցության համաձայնությամբ:

Ծրագրի նախնական առաքելության անդամները ներկայումս Հայաստանում են. ՊԳԿ աշխատակիցներ՝ կաթնամթերքի և մսամթերքի հարցերով պատասխանատու պրն Էնթոնի Բենեթ, Դաշտային ծրագրերի հարցերով պատասխանատու պրն Նեջադ Այանովիչ և իրավական հարցերով խորհրդատու պրն Լալայնա Ռավեռնամանցառ:

Ծրագրի իրականացման աշխատանքային պլանը կքննարկվի ՀՀ կառավարության պաշտոնյաների հետ: